



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/151/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

20 հունիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արմեն Մարությանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2025 թվականի հունիսի 20-ին քննելով Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գրիգոր Աշոտի Դալլաքյանի կողմից՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/151/2025 վարչական գործը՝

ՊԱՐԶԵՑ

Լ. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-րդ և 26.2-րդ հոդվածներով՝ Գրիգոր Աշոտի Դալլաքյանի վերաբերյալ

իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրել է վերջինիս գույքային դրությունը, այդ թվում՝ նախկինում ներկայացված հայտարարագրերը: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրականացվել է հայտարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում արձանագրվել է հետևյալը՝

1) Բարեվարքության ուսումնասիրության շրջանակում Գրիգոր Դալլաքյանը Հանձնաժողովին է ներկայացրել 2020-2023 թվականների ընթացքում ստացված մի քանի վարկերի քաղվածքներ, որոնց ուսումնասիրությամբ պարզվել է, որ յուրաքանչյուր տարվա ընթացքում հաջորդաբար ստացված վարկերով կատարել է նախորդիվ ստացած վարկի ամբողջական մարումներ, մինչդեռ Հայտարարագրում չի հայտարարագրել վարկի մարմանն ուղղված ծախսը, ինչպես նաև 2023 թվականին ստացված վարկը՝ որպես եկամուտ:

2) Պաշտոնատար անձի՝ 2021 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի եկամուտներ բաժնում հայտարարագրել է բանկից ստացված 16,500,000 ՀՀ դրամի չափով վարկի վերաբերյալ տվյալ՝ միաժամանակ նշելով, որ վարկը ստացվել է կառուցապատման նպատակով, ընդ որում՝ բանկը հաստատել է 16,500,000 ՀՀ դրամ, սակայն առաջին փուլով ստացել է 13,000,000 ՀՀ դրամը, իսկ երկրորդ փուլում տրամադրվելու է մնացած 3,500,000 ՀՀ դրամը: Նույն հայտարարագրի տարեվերջի դրությամբ հայտարարագրել է 3,500,000 ՀՀ դրամ ստացված վարկի և փոխառության մնացորդ, մինչդեռ պաշտոնատար անձի՝ 2022 և 2023 թվականների գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի տարեվերջի դրությամբ ստացված վարկերի և փոխառությունների մնացորդներ չի հայտարարագրել:

3) ԿԲ-ից ստացված տվյալների համաձայն՝ 2023 թվականի տարեսկզբին Գրիգոր Դալլաքյանի բանկային հաշվի մնացորդը կազմել է 510,401 ՀՀ դրամ, մինչդեռ Հայտարարագրում տարեսկզբին բանկային հաշվի մնացորդ չի հայտարարագրել:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ, և 2025 թվականի ապրիլի 28-ին Գրիգոր Դալլաքյանին փոստային

առաքմամբ և էլեկտրոնային փոստի միջոցով հասցեագրել է թիվ 01/1772-2025 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 15:00-ին Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 15:00-ին գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված գրությունը Գրիգոր Դալլաքյանը էլեկտրոնային փոստի միջոցով չի ստացել, իսկ փոստային ծանուցումը Հանձնաժողով է վերադարձվել 2025 թվականի հունիսի 4-ին՝ չպահնջված նշումով (հիմք՝ LO127678283AM 2025 թվականի հունիսի 4-ի ետ վերադարձ՝ CN 15), որից հետո նշված ծանուցումը տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (www.azdarar.am) կայքում (<https://azdarar.am/hy/public-announcement/view/34642ba3-3487-4350-b7b6-7ce2d8f27a41>):

1.3 2025 թվականի հունիսի 18-ին պատշաճ ծանուցված Գրիգոր Դալլաքյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 100/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Գրիգոր Դալլաքյանի բացակայությամբ 2025 թվականի հունիսի 20-ին, ժամը՝ 16:30-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի մասնակից Գրիգոր Դալլաքյանի կողմից վարչական վարույթի ընթացքում որևէ դիրքորոշում կամ պարզաբանում չի ներկայացվել:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/151/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների վերլուծություն և հաստատված է համարում, որ՝

3.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գրիգոր Աշոտի Դալլաքյանը հանդիսացել է գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Գրիգոր Դալլաքյանի կողմից Հայտարարագիրը Հանձնաժողով է ներկայացվել 2024 թվականի մայիսի 22-ին:

3.3 Գրիգոր Դալլաքյանը 2020-2023 թվականների ընթացքում ստացել է մի քանի վարկեր, մինչդեռ Հայտարարագրում չի հայտարարագրել վարկի մարմանն ուղղված ծախսը, ինչպես նաև 2023 թվականին [REDACTED] ստացված 3,500,000 ՀՀ դրամ վարկը՝ որպես եկամուտ:

3.4 ԿԲ-ից ստացված տվյալների համաձայն՝ 2023 թվականի տարեսկզբին Գրիգոր Դալլաքյանի բանկային հաշվի մնացորդը կազմել է 510,401 ՀՀ դրամ, մինչդեռ Հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում (բացառությամբ ավանդների) տարեսկզբին բանկային հաշվի մնացորդ չի հայտարարագրել:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածով Գույքի հայտարարագրի բովանդակությունը ներառում է դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա): Նույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը: Նույն հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ դրամական միջոցի դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը և արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը

4.3 Օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ եկամուտների հայտարարագիրը ներառում է ստացված փոխառությունները, ստացված վարկերը (այդ թվում՝ հիփոթեքային):

Նույն հոդվածի 6.1-ին մասի համաձայն՝ ստացված փոխառությունը հայտարարագրելիս նշվում են նաև տարեկան հայտարարագրի դեպքում՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի (...) դրությամբ փոխառության մնացորդի չափը, ինչպես նաև ստացված փոխառության տոկոսադրույքը, նպատակային նշանակությունը:

Նույն հոդվածի 6.2-րդ մասի համաձայն՝ վարկը հայտարարագրելիս նշվում են նաև վարկի նպատակային նշանակությունը, տարեկան հայտարարագրի դեպքում՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի (...) դրությամբ վարկի մայր գումարի մնացորդի չափը, իսկ հիպոտեկի դեպքում՝ նաև հիպոտեկի առարկան և դրա գտնվելու վայրը:

4.4 Օրենքի 40.1-ին հոդվածի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով կատարված հետևյալ ծախսերը. (...) վարկի մարմանն ուղղված վճարումները (...):

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.8 Օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝ տվյալ գործի քննությունը վերաբերում է արդյոք իր իրավասությանը թե ոչ, ճիշտ են կազմվել արդյոք վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը, **գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են արդյոք դրա քննության ժամանակի և տեղի մասին**, պահանջվել են արդյոք անհրաժեշտ, լրացուցիչ նյութերը և վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն սույն օրենսգրքի 169.28-րդ և 169.31-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

4.13 Օրենսգրքի 247-րդ հոդվածի վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝ (...) վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը (...):

4.14 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.15 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Տվյալ դեպքում Հանձնաժողովն գտնում է, որ թեև Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գրիգոր Աշոտի Դավաթյանը Հայտարարագրում անզգուշաբար սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու արդյունքում թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք, այդուհանդերձ նկատի ունենալով այն, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին անցել են Օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետները (Հայտարարագիրը ներկայացվել է 2024 թվականի մայիսի 22-ին, իսկ գործի քննությունը նշանակվել է 2025 թվականի հունիսի 20-ին), վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, օրենսգրքի 37-րդ, 247-րդ և 275-րդ հոդվածներով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գրիգոր Աշոտի Դալլաքյանի վերաբերյալ հարուցված ՎԻՎ/151/2025 վարչական վարույթը կարճել՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին Օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետն անցած լինելու հիմքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գրիգոր Աշոտի Դալլաքյանին այն սահմանված կարգով հանձնելու հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Գրիգոր Աշոտի Դալլաքյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրում համապատասխան ուղղումներ կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՅԱՆ